REDEMOS

RECONFIGURING EU DEMOCRACY SUPPORT. TOWARDS A SUSTAINED DEMOS IN THE EU'S EASTERN NEIGHBOURHOOD

Քաղաքականության համառոտագիր

ԵՄ արևելյան հարևանությունում վիճարկվող ժողովրդավարության նարատիվները. հետևանքները ԵՄ քաղաքականության համար

Անդրեյ Դարկովիչ և Մարինա Ռաբինովիչ

Դեկտեմբեր, 2025

Funded by the European Union

The REDEMOS project has received funding from the European Union's Horizon Europe research and innovation programme under grant agreement No 101061738. The Associated Partner University of Surrey has received funding from UK Research and Innovation (UKRI) under the UK government's Horizon Europe funding guarantee under grant number 10040721. The Associated Partner University of St. Gallen has received funding from the Swiss State Secretariat for Education, Research and Innovation (SERI). Views and opinions expressed are, however, those of the author(s) only and do not necessarily reflect those of the European Union, UKRI and SERI. Neither the European Union nor UKRI or SERI can be held responsible for them.

Իրավիճակի նկարագրում

ԵՄ արևելյան հարևանությունը դարձել է լիբերալ-ժողովրդավարական և ավտորիտար վարչակարգերի մոդելների միջև մրցակցության կենտրոնական հարթակ: ԵՄ-ն՝ համախոհ գործընկերների հետ միասին, ձգտում է խթանել ժողովրդավարացումը, օրենքի գերակայությունը և մարդու իրավունքները Հայաստանում, Ադրբեջանում, Բելառուսում, Վրաստանում, Մոլդովայում և Ուկրաինայում: Միևնույն ժամանակ Ռուսաստանը և որոշ չափով Չինաստանը տարածում են քաղաքական կարգի այլընտրանքային պատկերացումներ, որոնք մարտահրավեր են նետում ԵՄ նորմատիվ առաջնորդության հավակնությանը և նրա կարողությանը՝ հանդես գալու որպես անվտանգության և զարգացման վստահելի գործընկեր:

Վերջին տասնամյակում Ռուսաստանը լիբերալ ժողովրդավարությունը շարունակաբար ներկայացնում է որպես քաղաքակրթությանն ուղղված սպառնալիք՝ Արևմուտքի կողմից ժողովրդավարական շարժումներին տրամադրվող աջակցությունը բնութագրելով որպես աշխարհաքաղաքական պատերազմի ձև: Այս խոսույթները պարզապես արտաքին քարոզչություն չեն. դրանք ձևավորվում են համատեղ՝ տեղական դերակատարների մասնակցությամբ և սերտորեն փոխկապակցվում են ներքին դժգոհությունների, ինքնության ճգնաժամերի և անվտանգության երկընտրանքների հետ: Այս իմաստով, տեղեկատվության օտարերկրյա մանիպուլյացիան և միջամտությունը (FIMI) ոչ այնքան արտաքին ցնցում է, որքան խոսույթային ռեսուրսների մի ամբողջություն, որը ներքին էլիտաները կարող են մոբիլիզացնել, որպեսզի լեգիտիմացնեն ավտորիտար համախմբումը, ձգձգվող բարեփոխումները կամ Մոսկվայի հետ ընտրողական համաձայնեցումը:

Չինաստանի ներկայությունը ԵՄ արևելյան հարևանության տեղեկատվական միջավայրում առավել սահմանափակ է, սակայն կատարողականի և զարգացման վրա հիմնված նրա նարատիվը կարևոր հիմնաքար է այն կառավարությունների և հասարակությունների համար, որոնք հիասթափված են Արևմուտքի կողմից ժողովրդավարության դանդաղ, պայմանական և երբեմն անհետևողական աջակցությունից: Հատկապես Վրաստանում չինական ուղերձները խաչվում են տնտեսական կախվածության, ենթակառուցվածքների և դիվերսիֆիկացման վերաբերյալ ներքին քննարկումների հետ՝ առաջարկելով «երրորդ ճանապարհ», որը չի պահանջում լիբերալ բարեփոխումներ:

Հիմնական եզրակացություններ

- **Ռուսաստանը առաջ է մղում չորս համընդհանուր նարատիվներ,** որոնք ուղղակիորեն և անուղղակիորեն վիճարկում են լիբերալ ժողովրդավարությունն ու եվրոպական ինտեգրումը. (1) *«Դեգրադացվող և անկում ապրող Արևմուտք»,* (2) *«Պատմական միասնություն Ռուսաստանի հետ»*, (3) *«Ռուսաստանը ապահովում է անվտանգություն, Արևմուտքը հրահրում է հակամարտություններ»,* և (4) *«Արևմուտքից պարտադրված ժողովրդավարություն»*: Այս ձևաչափերը համակարգված կերպով ներկայացնում են ԵՄ-ն և ընդհանուր առմամբ Արևմուտքը որպես բարոյապես այլասերված, քաղաքականապես երեսպաշտ, ռազմավարական առումով ագրեսիվ և մշակութային առումով օտար Արևելյան հարևանության հասարակությունների համար:
- **Չինական նարատիվները պակաս բևեռացնող են, սակայն աննկատ կերպով թուլացնում են լիբերալ ժողովրդավարության գրավչությունը:** Չինաստանը առաջ է մղում մեկ՝ համեմատաբար ավելի մեղմ մետա-նարատիվ՝ **«Չինաստանը որպես դրական այլընտրանք»՝** շեշտադրելով տնտեսական պրագմատիզմը, չմիջամտելու քաղաքականությունը և զարգացումը և միաժամանակ անուղղակիորեն կասկածի տակ դնելով արևմտյան ժողովրդավարական մոդելի համընդհանրությունն ու արդյունավետությունը: Չինական նարատիվները երկրների մեծ մասում առավել թույլ են ներկայացված ի համեմատ ռուսականի, սակայն Վրաստանում այն դարձել է զգալիորեն ավելի տեսանելի՝ երկկողմ հարաբերությունների խորացման համատեքստում:
- **Արտաքին նարատիվների ընկալման մեջ վճռորոշ դեր են խաղում ներքին քաղաքական և սոցիոմշակութային պայմանները**: Ռուսական մեկնաբանությունները ակտիվորեն տարածվում են բելառուսական պետական վերահսկողության տակ գտնվող լրատվամիջոցներով և քաղաքական խոսույթում, մինչդեռ Ուկրաինայում դրանք խիստ վիճարկվում և հերքվում են: Մյուս երկրները (Հայաստան, Ադրբեջան, Վրաստան, Մոլդովա) զբաղեցնում են միջանկյալ դիրքեր՝ ընտրողաբար տարածելով, հարմարեցնելով կամ մերժելով առանձին նարատիվները:
- **Անվտանգությանը վերաբերող նարատիվները ժողովրդավարության աջակցությունը ներկայացնում են որպես սպառնալիք:** Շատ դեպքերում Ռուսաստանը պատկերվում է որպես կարգի և կայունության երաշխավոր, մինչդեռ ԵՄ-ն, ՆԱՏՕ-ն և ԱՄՆ-ը՝ որպես ապակայունացնող դերակատարներ, որոնք հրահրում են պատերազմներ, գունավոր հեղափոխություններ կամ տարածքային ամբողջականության կորուստ: Ժողովրդավարական շարժումները, ընտրություններին տեղի ունեցող ցույցերը և ԵՄ-ին առնչվող բարեփոխումները պատկերվում են որպես Արևմուտքի կողմից նախագծված խարխլում, այլ ոչ թե տեղական գործընթացների դրսևորումներ:
- **Կրոնն ու բարոյականությունը կենտրոնական գաղափարական պայքարի դաշտեր են**: Ռուսական նարատիվները ԵՄ-ն և ընդհանուր առմամբ Արևմուտքը համակարգված կերպով ներկայացնում են որպես բարոյապես այլասերված և «ավանդական արժեքների» նկատմամբ թշնամական՝ ԼԳԲՏՔ+ իրավունքներն ու գենդերային հավասարությունը օգտագործելով որպես բարոյական անկման խորհրդանիշներ: Այս պատկերացումները տարածվում են Մոլդովայում, Վրաստանում և Հայաստանում ուղղափառ եկեղեցու որոշ ներկայացուցիչների և պահպանողական դերակատարների միջոցով, սակայն շարունակաբար վիճարկվում են եվրոպամետ քաղաքական և քաղաքացիական էլիտաների կողմից:

Քաղաքականության վերաբերյալ առաջարկներ

Այսպիսով՝ ԵՄ քաղաքականություն մշակողների համար հիմնական մարտահրավերներն ունեն երկակի բնույթ։ Առաջին մարտահրավերը **գիտակցելն է, որ ժողովրդավարությունը վիճարկող նարատիվները վերացական խոսույթներ չեն**, այլ **կառուցվածքային ուժեր են, որոնք ձևավորում են քաղաքացիների ընկալումները ճգնաժամերի**, բողոքի ցույցերի, ինտեգրման և պատերազմի վերաբերյալ։ Երկրորդը՝ **ժողովրդավարության աջակցության, ընդլայնման և հարևանության այնպիսի քաղաքականություն մշակելն է**, որը մի կողմից չի թերագնահատի ավտորիտար ուղերձների ազդեցությունը, իսկ մյուս կողմից՝ ակամա չի ուժեղացնի դրանք, օրինակ՝ թույլ տալով, որ ժողովրդավարության աջակցությունը ներկայացվի որպես արտաքին միջամտություն, կամ տարանջատելով քաղաքական բարեփոխումները անվտանգության և բարեկեցության ոլորտներում կոնկրետ բարելավումներից։

Հայաստանում, Ադրբեջանում, Բելառուսում, Վրաստանում, Մոլդովայում և Ուկրաինայում ռուսական և չինական նարատիվների համեմատական վերլուծության հիման վրա ՌԵԴԵՄՈՍ հետազոտական խումբը ԵՄ-ի և նրա անդամ պետությունների համար առաջարկում է քաղաքականության հետևյալ ուղղությունները.

- Լիբերալ ժողովրդավարությունը ազգային կայունության հետ անհամատեղելի ներկայացնող արտաքին մոտեցումներին հակազդելու համար ԵՄ-ն պետք է առավել տեսանելի դիրքավորվի **որպես անվտանգություն ապահովող, այլ ոչ միայն նորմեր և բարեփոխումներ խթանող դերակատար**։ Այդ իսկ պատճառով ժողովրդավարության աջակցությունը պետք է **սերտորեն կապվի անվտանգության շոշափելի արդյունքների հետ**՝ ներդրումներ կատարելով կիբերդիմակայության, սահմանների պաշտպանության, պաշտպանական համագործակցության, կենսական ենթակառուցվածքների և քաղաքացիական պատրաստվածության ոլորտներում։ Տեղական հանրությանը և քաղաքական էլիտաներին այս կապերի մասին ուղղակիորեն հաղորդելը կարող է օգնել հերքելու այն նարատիվը, ըստ որի ԵՄ-ն և ՆԱՏՕ-ն «ներմուծում են անկայունություն», և փոխարենը ընդգծել, որ **ժողովրդավարացումը և Եվրոպայի հետ ավելի սերտ համագործակցությունը ապահովում են անվտանգության և հավաքական դիմակայության ամրապնդում**։

- Հակաժողովրդավարական նարատիվները շարունակում են պարարտ հող գտնել այն միջավայրերում, որտեղ **սոցիալ-տնտեսական դժգոհությունները մնում են չլուծված**, հատկապես պատերազմից, տեղահանությունից և տնտեսական ապակայունացումից տուժած առաջնագծային տարածաշրջաններում։ ԵՄ-ն պետք է ապահովի, որ **եվրոպական ինտեգրման գործնական, առօրյա օգուտները**՝ որակյալ աշխատատեղերը, հուսալի ծառայությունները, ավելի արդար կառավարումը և վերականգնված ենթակառուցվածքները լինեն տեսանելի և չափելի։ Անդամակցության և ժողովրդավարական բարեփոխումների գործընթացները **հստակ կապելով կենսապայմանների բարելավման և սոցիալական արդարության հետ**՝ ԵՄ-ն կարող է նվազեցնել այն պնդումների արժանահավատությունը, թե արևմտյան ներգրավվածությունը հանգեցնում է անհավասարության, կոռուպցիայի կամ կախվածության, միաժամանակ ամրապնդելով վստահությունը թե՛ եվրոպական հաստատությունների, թե՛ ներքին բարեփոխումներ կատարողների նկատմամբ։

- «Ավանդական արժեքների» գործիքի օգտագործումը Ռուսաստանի կողմից թույլ է տալիս ԵՄ-ն ներկայացնել որպես քաղաքակրթական սպառնալիք, մասնավորապես ուղղափառ մեծամասնություն ունեցող հասարակություններում։ Մշակութային այս զգայուն ոլորտներից խուսափելու փոխարեն ԵՄ-ն պետք է **կառուցողական կերպով համագործակցի պահպանողական և կրոնական դերակատարների հետ**, որոնք իրական ազդեցություն ունեն հասարակության վրա, և **միևնույն ժամանակ հաստատակամորեն պաշտպանի հիմնարար իրավունքները**։ Հավասարությունն ու իրավունքների պաշտպանությունը վերահիմաստավորելով **արժանապատվության, ընտանեկան անվտանգության և հարկադրանքից ազատ լինելու տեսանկյունից**, հնարավոր է նվազեցնել բևեռացումը և նվազեցնել ավտորիտար մշակութային պատերազմների նարատիվների արդյունավետությունը՝ առանց թուլացնելու ԵՄ-ի նորմատիվ հանձնառությունները։

- ԵՄ-ն պետք է **հարմարեցնի իր մոտեցումները** Արևելյան հարևանության **տարբեր ներքին պայմաններին**: Ուկրաինայում, Մոլդովայում և Վրաստանում եվրոպական աջակցությունը պետք է **ժողովրդավարական բարեփոխումները համադրի անվտանգության աջակցման և անդամակցության հստակ ուղիների հետ**: Ավելի ավտորիտար կամ հիբրիդային վարչակարգերում, ինչպիսիք են Բելառուսը, Հայաստանը և Ադրբեջանը, **մարդակենտրոն ներգրավվածությունը**՝ կրթության, շարժունակության, անկախ լրագրության և համայնքային զարգացման միջոցով կարող է պահպանել ժողովրդավարական ընտրազանգվածը և միաժամանակ նվազեցնել վարչակարգերի կողմից ԵՄ գործունեությունը որպես ապակայունացնող ներկայացնելու հնարավորությունը: **Տարբերակված, իրավիճակը հաշվի առնող մոտեցումը** կամրապնդի ժողովրդավարական կայունությունը՝ զուգորդելով ԵՄ աջակցությունը տեղական քաղաքական իրականությունը ձևավորող խթանների, ինքնության և խոցելիության հետ:

Ամբողջական հետազոտությունը՝ **ԵՄ-ի արևելյան հարևանության երկրների նորմերի նկատմամբ հավակնորդների նարատիվները,** հասանելի է հետևյալ հղումով՝
https://redemos.eu/resources/publications/working-papers/

REDEMOS: REconfiguring EU DEMOcracy Support.
Towards a sustained demos in the EU's Eastern Neighbourhood

REDEMOS- 101061738
HORIZON-CL2-2021-DEMOCRACY-01-04

Dr Mădălina Dobrescu, NTNU
info@redemos.eu

redemos.eu @REDEMOS_eu REDEMOS Horizon Europe Project